

բաշխումն ինչ-որ կերպ առնչվել է զոհաբերութեան հիւսկուրց, վաղուց իմաստափոխված սովորույթի հետ, մյուս կողմից՝ թելադրված է եղել հանգուցյալի հետ կապված յուրաքանչյուր իրի վնասաբեր ազդեցութիւնները գերծ մատուցել միտումով:

6. Անցյալ հարյուրամյակում և ներկա դարի սկզբներին սգո հանդերձը մայրց մեջ սև գույնի է եղել, որի վաղ անցյալում գործածութեան մասին տեղեկութիւններ կան միջնադարյան մասնագրութիւնում: Թաղման ժամանակ ամբողջովին սև են հագել հանգուցյալի մերձավոր և հարազատ կանայք, մայրը, կիներ, որոնք սևագեստ են մնացել առնվազն մեկ տարի, իբրև սգո նշան տղամարդիկ չեն սափորվել, իսկ մասուկում սուգն արտահայտվել է նրանով, որ տղամարդկանց գրպայի շուռ են ավել, վրան սև գլխաշոր-փուշի փոխելով: Ազգագեստ երբեմն ծառայել է նաև այն հագուստը, որ հանգուցյալի հագին է եղել մահախիս, իհարկե, հանելով ընդ որ տեսակի զարդարանքները:

7. Եխական հանդերձանքի թաղման և սգո տարբերակների դիտարկումից պարզուսում է, որ թաղման համանի ծեսերի համակարգը, հանդերձալ կյանքի վերաբերյալ եղած վաղնջական պատկերացումները, ենթադրել են միայն այդ ծիսակարգին հատուկ հանդերձ, մյուս կողմից՝ առօրյա հագուստներ, որոնց հարդրել են ծիսական իմաստ: Թաղման և սգո հանդերձանքի հետագա համապարփակ ուսումնասիրութիւնը հնարավորութիւն կընձեռնի բացահայտելու առանձին տարազամասերի դրսևորումները թաղման ծիսակարգում և, վերջին հաշիւով, վերականգնելու զգեստի հանգուցյալ տարբերակները:

Ն. Հ. ՄԱՌԻԱՐԻ

ԱԻ

ՔՐԴԱԿԱՆ , ԷՅ, ՔԱՅ ԹՈՂ, , ԳՐԵՐԳԻ ՏՄԲԵՐԱԿՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

1. Հայկական ՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում եղած ծայնագրութիւններում առկա են ժողովրդական երգերի ու նվագների ազգական տարբեր կապերով իրար հետ առնչվող բազմաբնույթ տարբերակներ: Դրանց ուսումնասիրումը հնարավորութիւն է ընձեռում մեկնաբանելու ժողովրդական երաժշտութեան զարգացման ցնդահանուր գործընթացն ու փոփոխութիւնները, ինչպես նաև բացահայտելու ազգային երաժշտութեան բնորոշ երևույթները:

2. Խոսքերի բովանդակութեամբ, երաժշտական լեզվով ու կա-

ուելցածքով ազգակցական մոտ և հեռու հարաբերութիւնների մեջ են գտնվում քրդական, էյ, բաց թող, կենցաղավարման մեծ տարածք ու նեցող պարերգի տարբերակները: Երգի խոսքերը և մեղեդին ժակրի ներսում տարբերակվելով հաղորդ, տարբերակվում են նաև իրարից անկախ, տեղայնացվելով ու հարմարվելով նոր պայմաններին: Մեր օրինակներում տարբերակումների միջոցով ստեղծվել են երգերի ներժանրային, միջժանրային և միջժյուզային հարաբերութիւններ:

3. ներժանրային տարբերակները խոսքերի և մեղեդիների օրնամենալ փոփոխութիւններով դիտարկվում են որպէս մոտ ազգակցական կապեր ու նեցող տիպային նմուշներ: Գործիքային տարբերակները, որոնք պարերգերի մեղեդիների հետ ունեն միջժանրային սերտ հարաբերութիւններ, վկայում են երգի մեղեդու ինքնուրույն և գործիցի հարավորութիւնների շնորհիվ ավելի ծավալուն ճևով կենցաղավարելու մասին:

Դրանց՝ գեղջկական պարերգերի ու գործիքային նվագների հետ, հեռու ազգակցական կապեր ունեն նույն խոսքերով քաղաքային երածը շտուկայն ժյուզի միմյանցից տարբերվող նմուշները: Ստացվում է ժողովրդական երածը շտուկայն տեսութիւնայն հայտնի, ընդհանուր խոսքերով տարբեր մեղեդիների առկայութիւն:

Տիպային նմուշների խոսքերի և մեղեդու կոմպոզիցիոն առանձնահատկութիւնները կարելի է դիտարկել որպէս քրդական պարերգային ժանրի բնորոշ երևույթ:

Լ. Ն. ԱՌՆԱԶԵԱՆ
ԳՄԿ

ԷՄԳԱՅԻԱՆ ՈՐԳԵՍ ԷՅՆՈՍՈՅԻԱԼԷՂԳԵՐԱՆԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ

1. Սոցիալ-հոգեբանական երևույթների էթնոմշակութային կոնտեքստի գործոնը պատկանում է նրանց թերևս ամենանշանակալից փոփոխականների կարգին: Վերջինս բացառվում է ինչպէս ինժոնրացիոն-բովանդակային, այնպէս էլ գործառական նկատառումներով, քանզի ժվայ հոգեբանական երևույթի կամ պրոցեսի իրական Ֆենոմենոլոգիական պատկերը և Ֆունկցիոնալ առանձնահատկութիւնները, ի թիվս այլ գործոնների, մեծապէս կանխորոշվում են նաև այն սոցիալ-մշակութային կոնկրետ միջավայրով, որտեղ այն անմիջականորեն հաղորդ է գալիս: Այս առումով սոցիալ-հոգեբանական երևույթների ազգագրական հետազոտութիւններն անկասկած ունեն